ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

BADASYAN CONSULTING

ՀՈՒԼԻՍ 2025

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում և մի շարք այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-205-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 01.08.2025թ.՝ որոշ բացառություններով)

- Հետայսու սույն օրենքը կոչվելու է «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենք: Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը շարունակելու է գործել որպես Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով:
- Սպառողների շահերի պաշտպանությունը ընդգրկելու է Հանձնաժողովի կողմից իրականացվող որոշակի միջոցառումների շրջանակ, որոնց նպատակն է լինելու կանխել, վերացնել այնպիսի վարքագիծը, գործողությունը կամ անգործությունը, որոնք վնասում են կամ կարող են վնասել սպառողների շահերը:
- Սահմանվում է սպառողների շահերը խախտող գործելակերպի հասկացությունը, որը ներառում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ ապրանքի գնի ներկայացման կանոնների խախտումը: Սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:
- Սահմանվել են վաճառքի գին, միավոր գին, էլեկտրոնային առևտրային հարթակ հասկացությունները: Ապրանքի գնի ներկայացման կանոնների համաձայն՝ ապրանքը վաճառքի ցուցադրելիս պետք է ներկայացվեն յուրաքանչյուր ապրանքի անվանումը, վաճառքի գինը և միավոր գինը: Միավոր գինը նշելու պահանջը չի տարածվում այն ապրանքների վրա.
  1. -որի վաճառքի գինը համընկնում է միավոր գնի հետ,
  2. -արտադրական փաթեթավորմամբ ապրանք, որի ծավալը չի գերազանցում 50 միլիլիտրը կամ քաշը՝ 50 գրամը,
  3. -տարբեր ապրանքներից կազմված հավաքածու, եթե դրանում ներառված յուրաքանչյուր ապրանքի արժեքային մասնաբաժինը չի գերազանցում հավաքածուի ընդհանուր գնի 90 տոկոսը:
- Ապրանքի գնի ներկայացման օրենքով սահմանված կանոնների խախտման հատկանիշների առերևույթ առկայության դեպքում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը տնտեսավարող սուբյեկտին ուղարկում է գրավոր ծանուցում: Իրավախախտում կատարելու փաստն ընդունելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը ծանուցումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողով է ներկայացնում խախտումը դադարեցրած լինելու և հիսուն հազար դրամ վճարած լինելու վերաբերյալ տեղեկատվություն: Գրավոր ծանուցումն առաջին անգամ ուղարկվելու դեպքում հիսուն հազար դրամ վճարելու պահանջը չի կիրառվում:
- Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությամբ սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:
- Հստակեցվել են մի շարք այլ հասկացություններ, այդ թվում՝ անարդար առևտրային գործելակերպը, մոլորեցնող գործողությունը և անգործությունը, ագրեսիվ առևտրային գործելակերպը:
- Անարդար առևտրային գործելակերպն արգելվել է:
- Բացի այդ, վարույթի հարուցման առիթների քննարկման շրջանակում տնտեսավարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու պարտականության խախտման դեպքում Հանձնաժողովը կարող է հարուցել վարույթ:

ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին (ՀՕ-256-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 02.08.2025թ.)

- Փոփոխության համաձայն՝ որպես գողության հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսվել է տրանսպորտային միջոցի բաղադրիչ մասերի, սարքերի կամ սարքավորումների հափշտակությամբ արարքի կատարումը:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-243-Ն, ընդունված՝ 02.07.2025թ., ուժի մեջ՝ 22.07.2025թ.)

- 2025թ. հուլիսի 22-ից գործող կարգավորումների համաձայն՝ ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարվում՝

1. եթե ոչ իրացման նպատակով 2025թ. օգոստոսի 1-ից հետո ձեռք են բերվել կամ ներմուծվել թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար:
2. եթե 2025թ. օգոստոսի 1-ից հետո լիզինգի պայմանագրերով ստացվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար:

- Թեթև մարդատար ավտոմեքենան ձեռք է բերվել կամ ներմուծվել է ոչ իրացման նպատակով, եթե սեփականության իրավունքը ստացել է պետական գրանցում:
- Ոչ իրացման նպատակով 01.08.2025թ.-ից հետո ձեռք բերված կամ ներմուծված մեքենաների մասով օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցված ԱԱՀ-ի գումարները մեքենայի հետագա օտարման դեպքում ենթակա են վերաձևակերպման՝ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներին ավելացման:
- 01.12.2023-31.07.2025թթ. ներառյալ ձեռք բերված կամ ներմուծված մեքենաների մատակարարման դեպքում հաշվարկվող ԱԱՀ-ի և դրա մասով հաշվանցված ԱԱՀ-ի գումարների բացասական տարբերությունը հաշվանցման ենթակա չէ: Բացասական տարբերության չափով կատարվում է վերաձևակերպում՝ նվազեցնելով օտարման ամսվա հաշվանցման ենթակա ԱԱՀ-ն (արդյունքում բացասական տարբերության չափով առաջանում է ԱԱՀ-ի պարտավորություն):
- 01.12.2023-31.07.2025թթ. ներառյալ ձեռք բերված կամ ներմուծված, վարձույթով տրամադրելու նպատակով օգտագործված մեքենայի մատակարարման մասով ԱԱՀ-ի բացասական տարբերությունը հաշվարկելիս հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարին ավելացվում են նաև վարձույթով տրամադրման ծառայության մասով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ հաշվարկային փաստաթղթերով այդ մեքենայի նույնականացնող տվյալների առկայության դեպքում:
- Արտադրողի դիստրիբյուտոր կամ դիլեր կամ լիզինգատու չհանդիսացող անձանց կողմից իրացման կամ ոչ իրացման նպատակով ներմուծած մեքենաների հետագա օտարումից շահութահարկով հարկման առումով եկամուտների հաշվարկման հատուկ կանոնի կիրառման տեսանկյունից սահմանվել է, որ այդ կանոնը կիրառվում է միայն 01.12.2023-31.07.2025թթ. ներառյալ ներմուծված տրանսպորտային միջոցների մասով:

ՀՀ քրեական օրենսգրքում և մի շարք այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-246-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 02.08.2025թ.)

- Օրենսդրական փոփոխություններով խստացվել է առանց վարորդական իրավունքի տրանսպորտային միջոց վարելու, ինչպես նաև սառը զենքին նմանվող առարկաներն անչափահասներին վաճառելու համար սահմանված պատասխանատվությունը:
- Անձը, ով վարորդական իրավունքի բացակայությամբ կվարի տրանսպորտային միջոց, այսուհետ կենթարկվի քրեական պատասխանատվության:
- Ավելացել է նաև սույն իրավախախտման, ինչպես նաև տրանսպորտային իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու համար նախատեսված սանկցիայի չափը:
- Բացի այդ, հետայսու արգելվում է արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքի նմանվող և արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաների, սարքերի կամ գործիքների վաճառքը 18 տարին չլրացած անձանց, հակառակ դեպքում վերը նշված առարկաները կրողը (16-18 տարեկան) կամ դրանք 18 տարեկան չլրացած անձի վաճառողը կենթարկվի վարչական պատասխանատվության:
- Սահմանվել է նաև, որ Ոստիկանությունն իրավունք կունենա շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ օգտագործել ենթադրյալ վարչական իրավախախտում կատարած անձանց նույնականացման համար:
- Վարորդական վկայականների մասով նախատեսվել է, որ ՀՀ քաղաքացիների (այդ թվում՝ երկքաղաքացի հանդիսացող)՝ այլ երկրներում ստացած և Վիեննայի՝ 1968 թվականի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականները ՀՀ տարածքում համարվում են գործող՝ այդ անձանց՝ ՀՀ մուտք գործելու պահից՝ երեք ամիս ժամկետով:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով վերանայվել են նաև այն դեպքերը, երբ անձը համարվում է առանց վարորդական վկայականի:

ՀՀ Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-255-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 02.08.2025թ.)

- Փոփոխությունների նպատակն է ապահովել նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի աշխատանքի ամբողջականությունը և նպաստել հարկային իրավախախտումների բացահայտման գործընթացին:
- ՀՀ վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման առումով օրենսգրքի կարգավորումների միասնական կիրառման առումով նախատեսվել է «նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորում» հասկացությունը.
- Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման տեսակը խմբագրվել է՝ ներառելով նաև նույնականացման միջոցների կիրառման ճշտության ստուգումը:
- Սահմանվել է, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների) պետք է տպագրված լինի նաև՝ նույնականացման միջոցների քանակը, նույնականացման միջոցների հիման վրա հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ստուգիչ համարը:
- ՀԴՄ կիրառության կանոնները լրացվել են այն պահանջով, որ կիրառողները նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում պարտավոր են ՀԴՄ միջոցով կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով ապահովել նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան՝ դրանք սկանավորելու և ՀԴՄ կտրոն տպագրելու միջոցով, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերում և կարգի, երբ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը կիրականացվի էլեկտրոնային եղանակով:
- Սահմանվել է պատասխանատվություն՝ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն չփոխանցելու կամ փոխանցման ենթակա տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն փոխանցելու համար՝ յուրաքանչյուր նույնականացման միջոցի մասով խախտման համար՝ տուգանք 30 հազար դրամի չափով՝ որոշ բացառություններով:
- Դրոշմապիտակների՝ մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ առանց վերագրման (հաշվառման) էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարման կամ էլեկտրոնային եղանակով կատարված գրանցումներին չհամապատասխանող դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարելու դեպքում օրենսգրքի 424-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը կիրառվելու է նաև նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոններին չհամապատասխանող դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարելու դեպքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին (ՀՕ-253-Ն), «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին (ՀՕ-254-Ն) (ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 01.09.2025թ.)

- Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդները պարտավոր են միայն երկու ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ պատահարի պահից քսան րոպեների ընթացքում թողնել պատահարի վայրը և ավտոտրանսպորտային միջոցը տեղափոխել օրենքով չարգելված այլ վայր, եթե ավտոտրանսպորտային միջոցը պատահարի հետևանքով չունի այնպիսի տեխնիկական անսարքություն, որի առկայության դեպքում արգելվում է դրա շահագործումը:
- Հակառակ դեպքում, վարորդները կենթարկվեն վարչական պատասխանատվության:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-232-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 16.07.2025թ.)

- ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7214 և 7215 ապրանքային դիրքերին դասվող պողպատե ամրանների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար պետական տուրքը սահմանվում է բազային տուրքի 29-ապատիկի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-244-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 22.07.2025թ.)

- Փոփոխվել է պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու համար նախատեսված ազատազրկման չափը:
- Փոփոխվել է նաև վարժական հավաքից խուսափելու համար նախատեսված սանկցիան:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-257-Ն), Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-258-Ն), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-259-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 01.09.2025թ.)

- Այսուհետ վարորդական վկայական է համարվելու նաև ՀՀ ՆԳՆ կողմից հատկացված վարորդական վկայականի թվային տարբերակը: Օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող վարորդական իրավունքի վկայականներ կամ հաշվառման վկայագրեր ունեցող անձանց համար ՀՀ ՆԳՆ էլեկտրոնային համակարգն ինքնաշխատ եղանակով առանց պետական տուրքի վճարման ձևավորելու է համապատասխանաբար թվային վարորդական վկայական կամ հաշվառման վկայագիր:
- Միաժամանակ սահմանվել են որակավորման քննությունների դրական արդյունքների հիման վրա առաջին անգամ միայն թվային վարորդական վկայական տալու, վարորդական իրավունքի վկայական ստանալու տեսական կամ գործնական քննություններին արտահերթ մասնակցելու և տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման գործողության արդյունքով տպագրված փաստաթղթերը և (կամ) հաշվառման համարանիշներն առաքելու համար վճարման ենթակա պետական տուրէի դրույքաչափերը:

«ՀՀ-ի և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին (ՀՕ-200-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 12.07.2025թ.)

- Երկրի ներսում տարածքների միջև տրանսպորտային կապը մեծացնելու, հարաբերական տրանսպորտային մեկուսացումից դուրս գալու և երկրի տարանցիկ ներուժն իրացնելու նպատակով ՀՀ կառավարությունը որոշել է իրականացնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման ազգային լայնածավալ ծրագիրը:
- Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս ճանապարհի կառուցումը կապահովի Հայաստանի հարավային սահմանից դյուրին երթևեկը մինչև Վրաստանի սահման, ապա նաև՝ դեպի սևծովյան նավահանգիստներ, թույլ կտա իրականացնել եվրոպական չափանիշներին համապատասխանող բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ, զարգացման լուրջ հնարավորություններ կընձեռի Հայաստանի հարավից հյուսիս ընկած բոլոր բնակավայրերին:

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում և մի շարք այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-261-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 08.08.2025թ.՝ որոշ բացառություններով)

- Օրենսդրական փաթեթի ընդունումը պայմանավորված է ՀՀ օրենսդրական կարգավորումների՝ Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (այսուհետ՝ ՖԱԹՖ) պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:
- Հստակեցվել են մի շարք հասկացություններ՝ այդ թվում՝ իրավաբանական անձի, տրաստի, իրական շահառուի, բարձր և ցածր ռիսկի չափանիշների, ահաբեկչության հետ կապված անձի հասկացությունները:
- Հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվել են ռիսկերի զսպմանն ուղղած հավելյալ պարտականություններ՝ կապված մինչև հաճախորդի ինքնության ստուգումը գործարար հարաբերությունների հաստատման, հաճախորդի կամ նրա իրական շահառուի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու հանգամանքի պարզման, կյանքի ապահովագրության, շահառուներին առնչվող ռիսկի չափանիշների գնահատման և հավելյալ միջոցառումների իրականացման հետ:
- Նախատեսվել է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց գույքի սառեցման ընթացակարգը:
- Գործարքը կամ գործարար հարաբերությունը ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնն այսուհետ կարող է կասեցնել ոչ միայն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, այլ նաև նախորդող հանցագործության կասկածի դեպքում:
- Նախատեսվել է նաև, որ հաշվետվություն տրամադրող անձը Լիազոր մարմնում հաշվառվելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատում և Լիազոր մարմին է ներկայացնում ներքին իրավական ակտերը:
- Վերանայվել են օրենքով նախատեսված պարտականությունների չկատարման համար նախատեսված սանկցիաները:

«Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-228-Ն), «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-229-Ն) (ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 25.07.2025թ.)

- Արգելվել է Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտներում շահումով խաղի կամ ինտերնետային շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի գովազդի տեղադրումը:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-237-Ն), «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-238Ն), «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին (ՀՕ-239-Ն) (ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 22.07.2025թ.)

- Ավելացվել են հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում լիազորված մարմնի իրավասությունները:
- Այսուհետ լիազոր մարմինը հաստատելու է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն հանձնված հնագույն, հին և միջնադարյան պատմամշակութային անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման աշխատանքների համար անհրաժեշտ՝

1. ճարտարապետահատակագծային առաջադրանքի,
2. շինարարության թույլտվության, ինչպես նաև ավարտական և շահագործման ակտերի ձևերը:

«ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ-ում Ռուս-հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին (ՀՕ-199–Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 12.07.2025թ.)

- Համաձայնագրի վավերացման նպատակն է առավել հստակ ձևակերպել Ռուս-հայկական համալսարանի կառավարման սկզբունքային մոտեցումները, կրթական ծրագրերի իրականցման հավասար մոտեցման սկզբունքը՝ ՀՀ և ՌԴ օրենսդրություններին համապատասխան:

«Տրանսպորտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (ՀՕ-245-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 22.07.2025թ.)

- Նախատեսվում է, որ Կառավարությունը տրանսպորտի առանձին տեսակներով իրականացվող ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների զարգացման նպատակով կարող է նոր տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, ինչպես նաև ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալներն ավելացնելու համար ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հաստատել աջակցության ծրագրեր:

«Գնումների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-242-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 22.07.2025թ.)

- Նախատեսվում է, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից հաստատված ցանկում ներառված հանրային կազմակերպությունները գնումներ կարող են կատարել իրենց ազդեցության տակ գտնվող ընկերություններից, պայմանով, որ վերջիններս ևս իրենց կարիքների համար կատարվող գնումները կկատարեն «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով:
- Սահմանվում է, որ նման ընկերությունների ցանկը կհաստատի ՀԾԿՀ-ն՝ հանրային ծառայություններ մատուցող կազմակերպության դիմումի հիման վրա:
- Ընկերությունները կունենան իրենց գնումների կատարման կարգերը, որոնք չպետք է հակասեն նշված օրենքով սահմանված նպատակներին և սկբունքներին:

Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-187-Ն, ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 28.06.2025թ.՝ որոշ բացառություններով)

- Որպես պետական վերահսկողական ծառայության գործունեության խնդիր սահմանվել է պետական միջոցների և պետական սեփականության օրինական ու արդյունավետ կառավարման, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում օրինականության պահպանման նպատակով վարչապետին օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակում անկողմնակալ և ամբողջական տեղեկատվություն կամ մասնագիտական դիրքորոշում ներկայացնելը:
- Փոփոխվել են նաև պետական վերահսկողական ծառայության լիազորությունները և դրանց իրականացման կարգը:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում և մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-201-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 16.07.2025թ.)

- Փոփոխություններով կանոնակարգվել և հստակեցվել են միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների հետ կապված հարաբերությունները:
- Նախատեսվել է, որ ավտոբուսային կանոնավոր փոխադրումների ժամանակ ավտոբուսի սրահը և դրսի հատվածը, կանգառասրահները կարող են լուսանկարահանվել և տեսանկարահանվել:
- Սահմանվել է նաև, որ համայնքի ղեկավարի որոշմամբ ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումները կարող են կազմակերպվել նաև «Գնումների մասին» օրենքի պահանջներին համապատասխան իրականացված գնման գործընթացի միջոցով կամ առանց մրցույթի և առանց գնման գործընթացի կազմակերպման՝ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ կազմակերպության միջոցով:
- Բացի այդ, նախատեսվել է, որ օրենքով սահմանված անձինք իրականացնելու են համայնքի վարչական տարածքում ներհամայնքային փոխադրումների միասնական ծառայության կազմակերպման տեղական վճարի գանձման նկատմամբ հսկողություն:
- Ուղևորները պարտավոր են տրանսպորտային միջոց մուտք գործելուց հետո մեկ րոպեի ընթացքում վավերացնել տեղական վճարի վճարման կրիչը և մինչև ուղևորության ավարտն իրենց մոտ պահպանել վավերացված կրիչը և տեղական վճարի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց պահանջի դեպքում տրամադրել նրանց:
- Հսկողություն իրականացնող անձինք իրավունք կունենան տեղական վճարի վճարման միջոց չունեցող անձին շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցների օգտագործմամբ, այդ թվում՝ դիմապատկերով նույնականացնելու նպատակով բնակչության պետական ռեգիստրից ստանալու տեղեկատվություն, իսկ ուղևորների կողմից նույնականացումից հրաժարվելու դեպքում՝ դիմելու ոստիկանություն:
- Ծառայության տեղական վճարը կամ փոխադրավարձը չվճարելու համար սահմանվել է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-233-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանի գործարկմանը հաջորդող օրվանից, բայց ոչ ուշ, քան 2027 թվականի հունվարի 1-ը), «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-234-Ն), «Պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին (ՀՕ-235-Ն), «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացում կատարելու մասին (ՀՕ-236-Ն) (ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանի գործարկմանը հաջորդող օրվանից)

- «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով կարգավորվել են բնակչության պետական ռեգիստրի ձևավորման իրավական հիմքերը, բնակչության պետական ռեգիստրի տվյալների կազմը, բնակչության պետական ռեգիստրի հետ փոխկապակցված լրացուցիչ տեղեկությունները, ռեգիստրի վարման կարգը, տվյալների մուտքագրման, մշակման, այդ թվում՝ թարմացման, տվյալների անվտանգության պահպանության, տեղեկություններին հասանելիության ապահովման, հանրային ծառայությունների համարանիշի տրամադրման և նշված գործառույթների նկատմամբ մոնիտորինգի իրականացման հետ կապված հարաբերությունները:
- Այն նպատակադրված է մեկ միասնական տեղեկատվական համակարգում մեկտեղելու բնակչության ռեգիստրում ներառման ենթակա տվյալները:

«ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-230-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 16.07.2025թ.), «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-231-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 25.07.2025թ.)

- Նախատեսվում է ձևավորել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ միավորված համայնքը, որում ներառվել են ներկայիս Վաղարշապատ և Խոյ համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված թվով 19 բնակավայրերով:
- Նախատեսվում է վերոնշյալ համայնքում նշանակել համայնքի ավագանու ընտրություն:

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-240-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 22.07.2025թ.), «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-241-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Ոստիկանությունում այսուհետ ծառայության կարող է անցնել 18 տարին լրացած ՀՀ այն քաղաքացին, որն անցել է պարտադիր զինվորական ծառայություն, տիրապետում է հայերենին և իր անձնական հատկանիշներով, գործնական կարողություններով, կրթությամբ, ֆիզիկական պատրաստակամությամբ և առողջական վիճակով կարող է կատարել ոստիկանության գործառույթները:
- Այսուհետ ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողը կարող է ատեստավորվել նշանակումից երկու ամիս հետո: Իսկ փրկարարական ծառայության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողները տարին մեկ անգամ ենթակա են պարտադիր վերապատրաստման:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում և մի շարք այլ հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-195-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 09.07.2025թ.)

- Նախատեսվել է, որ Կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում, որով առերևույթ հիմնավորվում է, որ վտանգվել է կամ կարող է վտանգվել Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաղորդումը ստանալուց հետո՝ հինգօրյա ժամկետում, հարուցվում է վարչական վարույթ:
- Վարչական վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող են կիրառվել «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումները, այդ թվում՝ խախտումների հետևանքների վերացման ծրագրի սահմանում, լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակում, լիցենզավորված անձի կանոնադրության կամ կառավարման մարմնի անդամի փոփոխության պահանջ:
- Հանձնաժողովի նախագահի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է անհապաղ կատարման, և դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (ՀՕ-260-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 26.07.2025թ.)

- Փոփոխությունները վերաբերում են շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների արձակուրդի ժամկետներին:
- Նախատեսվել է, որ շարքային կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության ընթացքում հիմնական արձակուրդ տրվում է ընդհանուր 21 օրացուցային օր ժամկետով, իսկ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված զորամասերում ծառայություն անցնող շարքային կազմի պարտադիր զինծառայողներին՝ ընդհանուր 30 օրացուցային օր ժամկետով՝ զորամասի հրամանատարի (պետի) հրամանով:
- Սահմանվել է, որ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառություն անցնելու համար օրենքով սահմանված ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում կամ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողներն օգտվում են պետական աջակցությամբ բնակարանի կամ բնակելի տուն գնելու իրավունքի ձեռքբերման նպատակով հիպոթեկային վարկավորման նպատակային ծրագրից:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«2025 թվականի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու, ներմուծման լիցենզիայի տրամադրման ընթացակարգը սահմանելու, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» (N905-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 05.07.2025թ.)

- Ուժի մեջ է մտել «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը, որը նախատեսում է մի շարք գյուղատնտեսական ապրանքների համար արտոնություն սակագնային քվոտայի տեսքով՝ ապրանքների որոշակի քանակության համար:
- Կառավարության որոշմամբ սակագնային քվոտայի կիրառումը տարածվում է ՀՀ տարածք «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի կիրառմամբ ներմուծվող՝ իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների (ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած, բանջարեղենի առանձին տեսակներ թարմ կամ պաղեցրած) վրա:
- 2025թ. ընթացքում իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների ներմուծումը Իրանի Իսլամական Հանրապետությունից թույլատրվում է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով՝ լիցենզիայի առկայության դեպքում:
- Լիազոր մարմին է ճանաչվել Էկոնոմիկայի նախարարությունը:
- Միաժամանակ հաստատվել է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների՝ Իրանից ՀՀ ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգը:

«Հայաստանի Հանրապետության տարածք սահմանափակման ենթակա ապրանքների ներմուծման մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների տրամադրման կարգը և ձևերը սահմանելու մասին» (N904-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 14.07.2025թ.)

- ՀՀ տարածք ներմուծվող առանձին տեսակի ապրանքների ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգերը սովորաբար սահմանվում են Կառավարության առանձին որոշումներով, որոնք երբեմն տարբերվում են միմյանցից և չեն համապատասխանում ԵՏՄ իրավական ակտերին:
- Բաշխման ընթացակարգի միասնական մոտեցման ապահովման նպատակով որոշմամբ սահմանվել է սահմանափակման ենթակա ապրանքների ներմուծման մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների տրամադրման կարգ, որը կիրառելի կլինի բոլոր տեսակի այն ապրանքների ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման համար, որոնց հանդեպ Կառավարությունը կսահմանի ներմուծման թույլատրելի ծավալներ կամ առանձնահատկություններ:
- Միաժամանակ, սահմանվել են «պատմական» և «ոչ պատմական» գնորդներ հասկացությունները, ոչ պատմական գնորդների համար հստակեցվել է ապրանքների բաշխման կարգը, նախատեսվել են դրույթներ՝ համաձայն որոնց տնտեսվարող սուբյեկտներն իրավունք կունենան հրաժարվելու իրենց հատկացված ծավալից՝ ամբողջությամբ կամ մասնակի, նախատեսվել են ներմուծման թույլատրելի ծավալի չբաշխված քանակությունից ներմուծման նոր թույլատրելի ծավալ ստանալու համար հայտերի ներկայացման ժամկետներ:

«Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» (N881-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 01.08.2025թ., գործում է մինչև՝ 01.02.2026թ.)

- Կառավարության՝ 07.11.2024թ. N1755-Ն որոշմամբ սահմանված՝ սև և գունավոր մետաղների ջարդոնի ու թափոնի, ինչպես նաև սև և գունավոր մետաղից պատրաստված օգտագործված որոշ ապրանքների (որոնք կորցրել են որպես առաջնային ապրանք օգտագործելու պիտանելիությունը) արտահանման արգելքի ժամկետը սույն որոշմամբ երկարաձգվել է մինչև 01.02.2026թ.:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1373-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N994-Ն, ընդունված՝ 24.07.2025թ., ուժի մեջ 25.07.2025թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածում 22.01.2025թ. ՀՕ-19-Ն օրենքով կատարված փոփոխությունների կիրարկումն ապահովելու նպատակով Կառավարության 05.10.2017թ. N1373-Ն որոշմամբ հաստատված՝ շահութահարկ վճարողների (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտ-քերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգում սահմանվել է, որ դեբիտորական պարտքը դառնում է անհուսալի կետանցված դառնալու 366-րդ օրվանից, եթե դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը չի գերազանցում 300.000 դրամը (պարտքի 100.000 դրամի չափը փոխարինվել է 300.000 դրամով):
- 300.000 դրամը գերազանցող դեբիտորական պարտքերը դառնում են անհուսալի՝

1. դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից,
2. կամ դատարանի կողմից արձակված վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու օրվանից,
3. կամ դեբիտորական պարտքի գումարի բռնագանձման պահանջով նոտարի կողմից արձակված կարգադրության՝ կողմերի համար պարտադիր դառնալու օրվանից,
4. կամ դեբիտորական պարտքի բռնագանձման պահանջը քննած արբիտրաժային տրիբունալի կողմից վճիռ (բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի) կայացվելու օրվանից:

- Նշված կարգավորումները տարածվում են 01.01.2025թ.-ից հետո ծագած պարտավորությունների վրա, իսկ մինչ այդ ծագած պարտավորությունների մասով գործում են նախկին կարգավորումները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N201-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (N975-Լ, ընդունված՝ 17.07.2025թ., ուժի մեջ՝ 18.07.2025թ.), «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N1168-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (N987-Լ, ընդունված՝ 18.07.2025թ., ուժի մեջ՝ 19.07.2025թ.), «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N1530-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (N976-Լ, ընդունված՝ 17.07.2025թ., ուժի մեջ՝ 18.07.2025թ.)

- Որոշման ընդունումը պայմանավորված է Վրաստանի տարածքով հայկական կոնյակի տարանցիկ փոխադրման ընթացքում ծագած խնդիրների հետևանքով տնտեսավարողների մոտ առաջացած վնասների հետևանքով գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում խաղողի մթերումների նպատակով ներգրավված վարկերի սպասարկման բեռը որոշակիորեն թեթևացնելու համար ծրագրի պայմանները բարելավելու անհրաժեշտությամբ:
- Խաղողի մթերումների նպատակով 2025թ. ներգրավվող վարկերի չափը հաշվարկվում է այն պայմանագրերով, որոնք կնքվել են մինչև 01.09.2025թ.:
- 2022-2023թթ.-ին խաղողի մթերման նպատակով ներգրավված վարկերի մայր գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետները երկարաձգվում են լրացուցիչ մինչև 6 ամիս ժամկետով, և մինչև 6 ամիս ժամկետով երկարաձգվում են վարկերի մայր գումարների մարման ժամկետները՝ ֆինանսական կառույցների համաձայնությամբ, պայմանով, որ շահառուները ֆինանսական կառույցներին են ներկայացնում 2025թ.-ի խաղողի մթերումների համար կնքված պայմանագրեր, որոնց արժեքը գերազանցում է վարկերի մայր գումարի մարման երկարաձգվող ամիսների համար սահմանված ժամանակացույցով նախատեսված մարումների գումարների հանրագումարի չափը:
- 2022 և 2023թթ.-ին տրամադրված վարկերի մայր գումարի մարման ժամկետները մինչև 6 ամիս ժամկետով երկարաձգելու դեպքում նույն ժամկետով երկարաձգվում են նաև տրամադրված բյուջետային երաշխիքների մարման ժամկետները և նախկինում տրամադրված բյուջետային երաշխիքները փոխարինվում են նոր երաշխիքներով՝ երկարաձգված համապատասխան ժամկետներով:

«Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների կամ միջադեպերի քննության անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1777-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» (N933-Ն, ընդունված՝ 10.07.2025թ., ուժի մեջ՝ 12.08.2025թ.-ից, բացառությամբ անօդաչու թռչող համակարգերի բաղադրիչներին առնչվող դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 26.11.2026թ.-ից)

- Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգը չի համապատասխանում «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի թիվ 13-րդ հավելվածի ստանդարտներին և առաջարկվող գործելաձևերին, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 996/2010 (ԵՄ) կանոնակարգին:
- Սահմանվել է Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների կամ միջադեպերի քննության անցկացման կարգը՝ համապատասխանեցնելով այն վերոնշյալ կանոնակարգերին:

«Լիցենզավորված և հավաստագրված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների գրանցամատյաններից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը հաստատելու մասին» (N903-Ն, ընդունված՝ 03.07.2025թ., ուժի մեջ՝ 04.07.2025թ.)

- Սահմանվել է լիցենզավորված և հավաստագրված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների գրանցամատյաններից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը:
- Հասանելիության իրավունք ունեն Պետական եկամուտների կոմիտեն, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը և առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը, որոնց տեղեկությունները ինքնաշխատ եղանակով տրամադրվում են առցանց՝ նախօրոք տրամադրված ծածկանունն ու գաղտնաբառը urban.e-gov.am էլեկտրոնային հարթակ մուտքագրելու միջոցով:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N572-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N1026-Ն, ընդունված՝ 24.07.2025թ., ուժի մեջ՝ 07.08.2025թ.), «Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 25-ի N116-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N1594-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N1596-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» (N1015-Ն, ընդունված՝ 24.07.2025թ., ուժի մեջ՝ 03.08.2025թ.)

- Առաջարկվող լուծումներով խելացի սարքի միջոցով էլեկտրոնային թվային ստորագրության ծրագրային միջավայրը պետք է պաշտպանված լինի PIN1 և PIN2 տեսակի անձնական նույնականացման կոդերով, ինչպես նաև նախատեսի նոր գրանցման հնարավորություն PIN կոդերը ապաբլոկավորելու համար:
- Հավաստագրման կենտրոնների տեխնոլոգիական լուծումը պետք է ապահովի, որ էլեկտրոնային նույնականացման միջոցը գտնվի բացառապես դրա օրինական տիրապետողի վերահսկողության ներքո, հուսալիորեն պաշտպանված լինի երրորդ անձանց կողմից օգտագործումից, կեղծումից, կրկրօրինակումից, և այլ տեսակի ռիսկերից:
- Հավաստագրման կենտոնների միջազգային ստանդարտներին համապատասխանության գնահատումը պետք է իրականացվի ԲՏԱ նախարարության կողմից հավաստարմագրման փուլում, նախարարությունը կիրականացնի շարունակական վերահսկողության Հավաստագրման կենտրոնների նկատմամբ:
- Հավաստագրման կենտրոնը յուրաքանչյուր երկու տարին մեկ պետք է իրականացնի անկախ գնահատում և արդյունքները ներկայացնի նախարարությանը, որը կարող է նաև սեփական նախաձեռնությամբ գնահատում իրականացնել, եթե ունի հիմնավորված կասկածներ ստանդարտներին և կարգավորումներին համապատասխանության վերաբերյալ:
- ԲՏԱ նախարարությունը վերը նշված գործընթացին կարող է նաև ներգրավել համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց:

«Հատակագծերի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները և հատակագծերի ներկայացման կարգը սահմանելու մասին» (N1028-Ն, ընդունված՝ 24.07.2025թ., ուժի մեջ՝ 29.07.2025թ.)

- Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքում 12.07.2024 թ.-ի ՀՕ-312-Ն օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների կիրարկմամբ, մասնավորապես՝ Օրենքի 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով, որի համաձայն՝ Կառավարությունը սահմանում է հատակագծերի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները և հատակագծերի ներկայացման կարգը:
- Որոշմամբ մանրամասն սահմանվում է գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեության որակավորման վկայական ունեցող անձանց կողմից հողամասի հանութագրման, շինությունների չափագրման և դրանց հատակագծերի կազմման ընթացակարգը:

«Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգը հաստատելու մասին» (N1018-Ն, ընդունված՝ 24.07.2025թ., ուժի մեջ՝ 03.08.2025թ.)

- Որոշմամբ դիտարկվել են այն կարգավորումները, որոնք սահմանված են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N65-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերով:
- Դիտարկվել են նաև այն ընթացակարգերը, որոնցով ներկայումս ղեկավարվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատասխանատու ստորաբաժանումը՝ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ձեռք բերման շրջանակներում, մասնավորապես՝ գնումների օրենսդրությամբ նախատեսված պարտադիր պահանջներով, որոնք ենթադրում են նորմատիվատեխնիկական փաստաթղթերի՝ արդի նորմատիվ պահանջներով համալրված տեխնիկական առաջադրանքների մշակման, մրցութային հայտերի կազմման, պայմանագրերի կնքման, ինչպես նաև փաստաթղթերի մշակման աշխատանքների ընթացքի համակարգման, շահագրգիռ մարմինների համաձայնեցումների, պետական-իրավական փորձաքննության եզրակացության ձեռք բերման և վերջնարդյունքի ընդունման գործընթաց:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1739-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N1001-Ն, ընդունված՝ 24.07.2025թ., ուժի մեջ՝ 03.08.2025թ.)

- «Թափոնների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թափոնների պետական հաշվառումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
- Նույն օրենքի 3-րդ մասի համաձայն՝ վտանգավոր թափոններ առաջացնող և թափոնների տեղադրում իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռներեցները, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ոլորտում լիազորված մարմնին պարտավոր են ներկայացնել վարչական վիճակագրական հաշվետվություններ: Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանված է Կառավարության 07.12.2006թ. N1739-Ն որոշմամբ, իսկ «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևը և հաշվետվության լրացման հրահանգը հաստատված են բնապահպանության նախարարի 22.08.2002թ. N112-Ն հրամանով:
- Կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանվել է, որ հաշվետվությունների կազմման և լիազոր մարմին ներկայացման գործընթացները պետք է իրականացվեն բացառապես էլեկտրոնային եղանակով, այդ նպատակով ստեղծված՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի համապատասխան բաժնի միջոցով:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 23-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N1008-Ն, ընդունված՝ 24.07.2025թ., ուժի մեջ՝ 25.07.2025թ.)

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով և դրանից բխող՝ Կառավարության 01.12.2024թ. «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման և հաշվառման վերաբերյալ տեղեկատվության ամփոփման, վերլուծման և արխիվացման կարգը հաստատելու մասին» N23-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ անշարժ աղբյուրներից մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումներ ունեցող իրավաբանական և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձինք թղթային տարբերակով կամ լիազոր մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստին շրջակա միջավայրի նախարարություն են ներկայացվում «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» վարչական վիճակագրական հաշվետվությունները, որի արդյունքում՝
- լիազոր մարմինը ձևավորում է մթնոլորտ վնասակար ազդեցություն ունեցող տնտեսվարողների ցանկը՝ ներառյալ ոչ միայն թույլատվություն ստացած, այլև հաշվառման ենթակա բոլոր տնտեսվարողներին,
- հաշվետվություն չներկայացնելու դեպքում՝ լիազոր մարմինը տեղեկացնում է մթնոլորտային օդի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ համապատասխան գործողություններ իրականացնելու համար,
- տեսչական մարմինը՝ փաստացի ներկայացված տվյալները համադրելով այլ ոլորտային հաշվետվությունների, արտադրանքի ծավալների և հումքի օգտագործման տվյալների հետ, իրականացնում է համապարփակ ստուգումներ:
- <u>Կառավարության որոշման մեջ կատարվող փոփոխություններով նախատեսվել է, որ.</u>

1. Վարչական վիճակագրական հաշվետվությունը ներկայացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի միջոցով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 25-ը,
2. Վերլուծված տվյալներն ամփոփվում և արխիվացվում են (պահպանվում են) «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգում: Ամփոփված տվյալները տարեկան վիճակագրական ծրագրով սահմանված ժամկետում ներկայացվում են վիճակագրական կոմիտե:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N1117-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» (N934-Ն, ընդունված՝ 10.07.2025թ., ուժի մեջ՝ 11.07.2025թ.)

- «Բուսասանիտարիայի մասին» օրենքում կատարված փոփոխություններով պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցմանն առնչվող հոդվածներով նախատեսվել են դրանց գրանցման ընդհանուր և պարզեցված ընթացակարգեր:
- Սահմանվել է, որ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա գրանցումը փոխարինվում է Լիազոր մարմնի կողմից գրանցման կարգով:
- Հստակեցվել է պարզեցված և ընդհանուր ընթացակարգերով գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ընթացակարգը:
- Որպես պեստիցիդների և ագրոքիմիկատների պարզեցված ընթացակարգով գրանցման դեպքեր են սահմանվել՝

1. ԵՄ անդամ պետություններում կամ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում կամ Իսլանդիայում կամ Նորվեգիայում կամ Շվեյցարիայում կամ Կանադայում կամ ԱՄՆ-ում կամ Ճապոնիայում կամ Իսրայելի Պետությունում կամ Ռուսաստանի Դաշնությունում կամ Ղազախստանի Հանրապետությունում պեստիցիդների գրանցված լինելը,
2. ԵՄ անդամ պետություններում կամ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում կամ Իսլանդիայում կամ Նորվեգիայում կամ Շվեյցարիայում կամ Կանադայում կամ ԱՄՆ-ում կամ Ճապոնիայում կամ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում կամ Հնդկաստանի Հանրապետությունում կամ Իսրայելի Պետությունում կամ Ռուսաստանի Դաշնությունում կամ Ղազախստանի Հանրապետությունում ագրոքիմիկատի արտադրված կամ գրանցված լինելը,
3. ԵՄ անդամ պետություններում կամ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում կամ Իսլանդիայում կամ Նորվեգիայում կամ Շվեյցարիայում կամ Կանադայում կամ ԱՄՆ-ում կամ Ճապոնիայում կամ Իսրայելի Պետությունում կամ Ռուսաստանի Դաշնությունում կամ Ղազախստանի Հանրապետությունում կամ Կորեայի Հանրապետությունում կամ Հնդկաստանի Հանրապետությունում ֆերոմոնների, բույսերի աճի կարգավորիչների և կենսաբանական ծագման պեստիցիդների արտադրված լինելը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N1056-Ն, ընդունված՝ 31.07.2025թ., ուժի մեջ՝ 01.08.2025թ.)

- Նախատեսվել է կատարելագործել ՀՀ-ում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը:
- Միաժամանակ կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացը չձախողելու և հասարակական տրանսպորտի կանոնավոր և անխափան աշխատանքն ապահովելու նպատակով առաջարկվում է մինչև N1994-Ն որոշման ուժի մեջ մտնելը շահագործման մեջ գտնվող ավտոբուսների ծառայության ժամկետը երկարաձգել մինչև 31.12.2027 թ.-ը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1043-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N1069-Ն, ընդունված՝ 31.07.2025թ., ուժի մեջ՝ 14.08.2025թ.)

- Կառավարության 11.09.2008թ. «Օդանավի կորելու, աղետալի իրավիճակում հայտնվելու, պատահարի կամ օդային երթևեկությանն այլ վտանգ սպառնալու դեպքում անհրաժեշտ միջոցառումների, ինչպես նաև օդային տրանսպորտի աղետի ժամանակ որոնողափրկարարական աշխատանքների իրականացման կարգը հաստատելու մասին» N1043-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով այն համապատասխանեցվել է «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի «Որոնում և փրկում» N12 հավելվածով սահմանված չափորոշիչներին:
- Մասնավորապես՝ հստակ ասհմանվել են օդանավի կորելու, աղետալի իրավիճակում հայտնվելու, պատահարի կամ աղետների դեպքերում Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում ստեղծվող օպերատիվ շտաբի, ՆԳՆ փրկարար ծառայության փրկարարական համակարգող կենտրոնի, ՊՆ ավիացիայի վարչության և պետական կառավարման այլ մարմինների համագործակցության մեխանիզմները, աշխատակարգերը և տեղեկացման սխեմաները:

«Հայաստանի Հանրապետության արտահանման խթանման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» (N1068-Լ, ընդունված՝ 31.07.2025թ., ուժի մեջ՝ 02.08.2025թ.)

- ՀՀ-ում արտահանման խթանման 2025-2030 թվականների ռազմավարությունը սահմանում է արտահանման խթանման զարգացման տեսլականը և դրան հասնելու արդյունավետ ճանապարհը:
- Տեսլականի իրագործման համար սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.
- Տնտեսական աճի ու մրցունակության համար նպաստավոր միջավայրի ստեղծում՝ միջազգային առևտրային հարաբերությունների խթանման և երկրի գործարար միջավայրի բարելավման միջոցով,
- Աշխարհագրական դիրքից բխող ռազմավարական առավելությունների ձեռքբերում՝ ենթակառուցվածքների զարգացման, գործընկերության հաստատման և նորարարական ապրանքների ու լոգիստիկ լուծումների ներդրման միջոցով,
- Արտահանման աճի խթանում՝ ազգային արտահանողների առևտրային ներուժի բարձրացման և բարդ ապրանքների ու ծառայությունների զարգացման խթանման միջոցով,
- Արտաքին շուկաների և ապրանքների դիվերսիֆիկացում՝ հնարավորությունների ընդլայնման, դիմակայունության ու կենսունակ տնտեսական միջավայրի համար ամուր հիմքեր ստեղծելու միջոցով,
- Արտահանման դիմակայուն էկոհամակարգի ստեղծում՝ արտահանման խթանման ծրագրերի ներդրման և համապատասխան ֆինանսական ու ոչ ֆինանսական ենթակառուցվածքների ձևավորման միջոցով:
- Ռազմավարությունը առանձնացնում է հետևյալ գերակայությունները՝

1. Արտահանման վրա հիմնված տնտեսական աճի ապահովում,
2. Արտահանման նկատմամբ համապարփակ և համազգային մոտեցման ձևավորում,
3. Արտահանման հանդեպ նորարարական և տեխնոլոգիական մոտեցման զարգացում,
4. Բարձր ավելացված արժեքով և ավելի քիչ ծախսատար ապրանքների արտահանման խթանում:

E-DRAFT հարթակում հանրային քննարկման դրված նախագծեր

Հուշարձանի տարածքի և դրա պահպանական գոտիների հատակագծերի օրինակելի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները, հատակագծերի կազմման և հատակագծերի ներկայացման և տարածական հաշվառման իրականացման կարգը սահմանելու մասին նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Կադաստրի կողմից մշակվել է նախագիծ, որով կհաստատվեն հուշարձանի տարածքի և դրա պահպանական գոտիների հատակագծերի օրինակելի ձևերը, դրանց կազմման, ներկայացման և տարածական հաշվառման կարգը:
- Այս փոփոխությունը բխում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի վերջին փոփոխություններից և նպատակ ունի ապահովել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքների պատշաճ հաշվառումը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի նպատակն է պարզաբանել քաղաքացիական և վարչական գործերով դատական քննության ողջամիտ ժամկետների բովանդակությունը և փոխել դրանց երկարաձգման կարգը:
- Նախագծերով սահմանվել է քաղաքացիական և վարչական գործերի քննության հստակ ժամկետ՝ վեց ամիս, ինչպես նաև սահմանվել է հնարավորություն երկարաձգելու վերոնշյալ ժամկետները՝ քաղաքացիական գործերով ոչ ավելի, քան երկու, իսկ վարչական գործերով՝ ոչ ավելի, քան երեք անգամ միայն պատճառաբանված որոշմամբ:
- Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարվող փոփոխությունները այլ կանոններ նախատեսված չլինելու պայմաններում կտարածվեն նաև սնանկության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների վրա:

«Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Գործող կարգավորումներին համապատասխան հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների հետագծելիություն ապահովվում է շրջանառության շղթայի սկզբում՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող/ներմուծողի կողմից նշանների ստացմամբ և ապրանքները շրջանառության մեջ դնելու միջոցով, ինչպես նաև շղթայի վերջում՝ ՀԴՄ-ով վաճառք իրականացնելու դեպքում այդ նշանների վերաբերյալ հարկային մարմին տեղեկության փոխանցմամբ:
- Դրոշմավորման ենթակա ապրանքները միշտ չէ, որ վաճառվում են ամբողջական տեսքով, հաճախ վաճառվում են նաև մաս-մաս: Երբեմն էլ դրոշմավորված ապրանքներն օգտագործվում են մեկ այլ ատադրանքի պատրաստման կամ սեփական կարիքների համար: Նշված դեպքերում հստակ չէ, թե ինչպես և երբ պետք է այդ ապրանքների վրա փակցված նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունն ուղարկել հարկային մարմին:
- Նախագծով լուծվել է վերոնշյալ խնդիրը:
- Մասնավորապես՝ նախատեսվում է, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը փոխանցվելու է բջջային հավելվածի միջոցով՝ մինչև դրոշմավորված ապրանքի օտարելը կամ օգտագործելը/սպառելը կամ շրջանառությունից հանելը:

«Հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը հաշվարկային փաստաթղթում ներառելու դեպքերը, կարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.12.2024թ. ՀՕ-491-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածում կատարված լրացման արդյունքում սահմանվել է, որ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառվում են հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում:
- Նախագծով առաջարկվում է սահմանել հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը հաշվարկային փաստաթղթում ներառելու դեպքերը, կարգը և ժամկետները:
- Մասնավորապես՝ նախատեսվում է, որ հաշվարկային փաստաթղթում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը ներառվում է՝

1. հաշվարկային փաստաթղթին որպես առանձին ֆայլ կցելու միջոցով,
2. 01.09.2025թ.-ից «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2402, 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի և 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ծածկագրերին դասվող ալկոհոլային ապրանքների մատակարարման դեպքերում,
3. հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ժամանակ՝ հարկային մարմնի էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի համակարգով (e-invoicing)՝ հսկիչ (նույնականացման) նշանները սկանավորելու և հաշվարկային փաստաթղթին կցելու միջոցով,
4. հաշվարկային փաստաթուղթը դուրս գրելուց հետո՝ բջջային հավելվածով՝ հսկիչ (նույնականացման) նշանները սկանավորելու և հաշվարկային փաստաթղթին կցելու միջոցով, բայց ոչ ուշ, քան հաշվարկային փաստաթուղթը ստացողի կողմից ստորագրվելը:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՏՈՐԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ 02.07.2025թ. ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ:

Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին *(հասանելի հետևյալ հղումով)*

- Նախատեսվում է ընդունել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը, որը կարգավորելու է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության համակարգում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարցերի հետ կապված հարաբերությունները և սահմանելու է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման սկզբունքները:
- Բարձրագույն կրթության և գիտության ոլորտում հարաբերությունները կարգավորվելու են Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով, «Կրթության մասին» օրենքով, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:
- Հստակեցվելու է բարձրագույն կրթության և գիտության ոլորտում պետական մարմինների լիազորությունների շրջանակը:
- Սահմանվելու են բարձրագույն կրթության և գիտության ոլորտում հիմնական հասկացությունները, այդ ոլորտներում պետական քաղաքականության սկզբունքները և հիմնական ուղղությունները, բարձրագույն կրթության և գիտության համակարգը, բարձրագույն կրթության կրթական ծրագրերը և դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները, ուսումնառության ժամկետները, բարձրագույն կրթության մակարդակները, որակավորումները և այլն:
- Կարգավորվելու է նաև բարձրագույն կրթության դիպլոմի, բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման, բուհի նկատմամբ կիրառվող նախազգուշացման և բուհի լիցենզիայի գործողության դադարեցման, բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման, օտարերկրյա որակավորումների ճանաչման, բուհ ընդունելության հետ կապված հարցերը:
- Սահմանվելու է նաև բարձրագույն կրթության և գիտության համակարգում ուսումնական և գիտական գործունեության սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև նախատեսվելու են հատուկ իրավակարգավորումներ՝ կապված բուհի և գիտական կազմակերպության կառավարման, հիմնադրման, վերակազմակերպման և լուծարման հետ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ